ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. նոյեմբերի 23-ից 24-ը Մոնրեալում (Կանադա)՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Խաչիկ Հակոբյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Մոնրեալ (Կանադա)

   2017թ. նեյեմբերի 23-ից 24-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Օզոնի քարտուղարություն

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

6. Մասնակցություն՝ Մոնրեալում կայանալիք «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի կողմ երկրների համաժողովի տասնմեկերորդ և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության կողմ երկրների քսանիններորդ հանդիպմանը (բարձր պաշտոնյաների հանդիպում):

7. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   Հանդիպումը մեկնարկեց հանդիսավոր բացումով, որը նվիրված էր «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության 30-րդ ամյակին, որի ժամանակ պաշտոնապես հայտարարվեց արձանագրության Կիգալիի ուղղման՝ արդեն 21 երկրների կողմից վավերացված լինելու մասին, ինչն անհրաժեշտ էր ուղղումն ուժի մեջ մտնելու համար: Հանդիսավոր բացմանը հաջորդեց նախարարական կլոր սեղան՝

նվիրված Մոնրեալի արձանագրության 30 տարվա ձեռքբերումներին և ապագա ծրագրերին: Կլոր սեղանին մասնակցել են Կանադայի, Էստոնիայի, Գվատեմալայի, Մալդիվների, Ռուանդայի և Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտի պետական մարմինների ներկայացուցիչներ՝ նախարարների կամ նախարարների տեղակալների մակարդակով, ինչպես նաև ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի գործադիր տնօրեն Էրիկ Սոլհայմը: Կլոր սեղանի ընթացքում իմ կողմից ներկայացվեցին Հայաստանում Մոնրեալի արձանագրության իրականացմանը նպաստող կարևորագույն ներդրումները, Մոնրեալի արձանագրության իրականցումից քաղված դասերը և դրանք այլ բնապահպանական խնդիրների լուծման համար կիրառելու հնարավորությունները, օզոնային շերտի ուսումնասիրությունների կայունությունն ապահովելու հնարավոր ուղիները ու Մոնրեալի արձանագրության իրականացման հաջորդ քայլերը:

Այնուհետև Մոնրեալի արձանագրության իրականացման համար ստեղծված Բազմակողմանի հիմնադրամի գործադիր կոմիտեի նախագահը ներկայացրեց Մոնրեալի արձանագրության կողմ երկրների 2016 թվականի հանդիպումից հետո կատարված աշխատանքները, ինչպես նաև քննարկվել են Բազմակողմանի հիմնադրամի 2018-2020 թվականների ժամանակահատվածի համար համալրման հարցերը:

Հանդիպման ընտացքում նաև ընտրվեցին Վիեննայի կոնվենցիայի կողմ երկրների 11-րդ հանդիպման նախագահը, համանախագահներն ու զեկուցողը: Հայաստանի հանրապետության օզոնի հարցերով ազգային համակարգողն ընտրվել է որպես համանախագահ:

Հանդիպման առաջին օրվա ավարտին տեղի ունեցավ 2017 թվականի Օզոնի մրցանակաբաշխությունը ութ անվանակարգերով: Հայաստանի Հանրապետության Օզոնի ազգային կենտրոնը «Կրեատիվ աշխատանք երիտասարդների հետ» անվանակարգում արժանացել է օզոնի մրցանակի, և

հանդիսացել է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ցանցի միակ երկիրը, որն արժանացել է որևէ մրցանակի:

ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2017թ. նեյեմբերի 23-ից 24-ը Մոնրեալում (Կանադա) կայացած հանդիպման ընթացքում ընդունվեցին մի շարք որոշումներ, որոնք վերաբերում են օզոնային շերտի սիստեմատիկ դիտարկումների իրականացմանը և դրանք ապահովող Տրաստային ֆոնդին կամավոր ներդրումների իրականացմանը, զարգացող երկրներում օզոնի ազգային կենտրոնների հզորությունների ամրապնդմանը, Կիգալիի ուղղման վավերացմանը, ապագայում քաղաքացիական ավիացիայում հալոնների հասանելիությանը և հիդրոքլորֆտորածխածինների փուլային փոխարինում իրականացնելիս էներգաարդյունավետության հարցերին անդրադարձ կատարելու անհրաժեշտությանը:

ՀՀ բնապահպանության

նախարարի տեղակալ՝

Խ.Հակոբյան